# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

## ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

09. հունվարի 2020 N 1-Ա

### ՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հայկավան համայնքում բնակվող Հովհաննես Հակոբի Տոլմոյանին առուվաճառքի պայմանագրով պատկանող սեփականաշնորհված հողամասը 1992թվականի սեփականաշնորհման հանձնաժողովի թիվ 3 որոշմամբ կազմել է 1900 քմ սեփականաշնորհված հողամաս: Քարտեզագրման և գույքագրման ժամանակ սեփականաշնորհված հողամասի փաստացի մակերեսը կազմել է 2016 քմ: Սեփականաշնորհված հողամասին կից ավել զբաղեցրած 116քմ հողամասը չի գտնվում Հ.Հ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Ղեկավարվելով Հ.Հ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, Տեղական ինքնակառավարման մասին Հ.Հ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Յովհաննես Տոլմոյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրինական սեփականաշնորհված հողամասին կից ավել զբաղեցրած 116 քմ հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հովհաննես Հակոբի Տոլմոյանին (ծածկագիր 0106-0015):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Ռ. Ղազարյան